

## ԿԱՐԾԻՔ

ԱՆԻ ԳԱԳԻԿԻ ՄԱԶՄԱՆՅԱՆԻ «ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ -  
ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԳ.00.01 «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության անցումը նպաստեց կրթական միջավայրի փոփոխմանը, որը ենթադրում է գիտելիքի դերի է՛լ ավելի մեծացում, գիտելիքի արժևորում, մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի արդիականացում ու շարունակական զարգացում, ինչը կարող է նպաստել բուհերի շրջանավարտների զբաղվածության և աշխատանքային կոմպետենտության ցուցանիշների բարձրացմանը, շարունակական կրթության ապահովմանն ու սոցիալական միջավայրին ինտեգրմանը: Հայաստանում այն ենթադրում է նաև ինտեգրում բարձրագույն կրթության տարածքներին միջազգային մակարդակում, եվրոպական չափանիշներին համապատասխան որակի ապահովման և գնահատման համակարգերի, որակավորումների շրջանակների մշակում, կիրառում և ինքնահավաստում:

Որակավորումների ազգային շրջանակների դերի կիրառման արդյունավետության վերջնարդյունքահենք կրթության իրականացման ու որակի բարձրացման և որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման հիմնախնդիրների վերաբերյալ կատարվել են ուսումնասիրություններ կրթության ոլորտի մասնագետների, փորձագետների, տեսաբանների, մանկավարժների ուսումնական և գիտահետազոտական կենտրոնների կողմից: Մակայն ՀՀ-ում դեռևս առկա են ՈԱՇ-ի ոչ լիարժեք կիրառման ու ինքնահավաստման խնդիրը: ՀՀ բուհերում դեռևս առկա է ՈԱՇ-ի արդյունավետ ու համապարփակ կիրառումը սահմանափակող ազգային, մշակութային և ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք հաճախ չեն արտացոլվում բուհերի գործունեության բարելավմանն ուղղված ծրագրերում ու

գործընթացներում: ՀՀ ՈԱՇ-ի արդյունավետ իրականացումն ու ԵՎԿՏ ՈՇ-ի հետ և համապատասխանության հաստատումը կարող են նպաստել ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավմանը, որակավորումների հանդեպ հանրության վստահության ու միջազգային մակարդակում համադրելիության և ճանաչելիության բարձրացմանը: Մրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Ա. Մազմանյանը, դուրս գալով թեմայի արդիականությունից, շատ հստակ սահմանել է հետազոտության նպատակը, որի իրականացման համար առաջադրել է խնդիրներ: Նկատելի է, որ հետազոտության բոլոր բաղադրիչները փոխկապված են: Ատենախոսությունն ունի հետևյալ կառուցվածքը. ներածություն, երեք գլուխ, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ և հավելված:

Ատենախոսության առաջին գլուխը, որը կրում է «Որակավորումների շրջանակները և դրանց մշակման մեթոդաբանությունը» խորագիրը, բաղկացած է երեք տրամաբանորեն փոխկապված ենթագլուխներից, որտեղ ներկայացված են որակավորումների շրջանակների տեսակները, զարգացման նախադրյալները, որակավորումների ազգային շրջանակների մշակման ազգային և միջազգային փորձը:

Առաջին՝ «Որակավորումների շրջանակների զարգացման պատմական ակնարկ» ենթագլխում, քննարկվում է որակավորումների շրջանակների մշակման անհրաժեշտությունը և զարգացման նախադրյալները: Հեղինակը դիտարկում է նաև մետաշրջանակները՝ որպես մեթոդաբանական հենք՝ որակավորումների ազգային շրջանակների մշակման և դրանց համադրելիության ապահովման համար:

Երկրորդ ենթագլխում, որը կրում է «Որակավորումների Եվրոպական շրջանակը որպես որակավորումների ազգային շրջանակների մշակման մեթոդաբանական հենք» խորագիրը, անդրադարձ է կատարվում որակավորումների եվրոպական շրջանակին, ներկայացվում են նպատակը, կառուցվածքը վերջնարդյունքների բնութագրիչները: Երրորդ՝ «Որակավորումների ազգային շրջանակների մշակման միջազգային փորձի վերլուծություն» ենթագլխում, հեղինակը ներկայացնում է Իռլանդիայի, Բելգիայի և Գերմանիայի



որակավորումների ազգային շրջանակը, դրանց մշակման մեթոդաբանությունը, շրջանակների առանձնահատկությունները, զարգացման ընթացքը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «ՀՀ որակավորումների ազգային շրջանակը որպես մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանական հիմք» բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնք իրենց բովանդակությամբ հանդիսանում են խորը ուսումնասիրությունների արդյունք և տալիս են ամբողջական պատկերացում որակավորումների ազգային շրջանակների կարևորության, վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման և իրականացման գործընթացների մասին:

Առաջին ենթագլխում, որը կրում է «Որակավորումների ազգային շրջանակների դերակատարությունը վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման և իրականացման գործընթացում» վերնագիրը, ներկայացված է նաև գործատուների և կրթության կապը, նրանց փոխհամագործակցության կարևորությունը: Ուշագրավ է աշխատանքի երկրորդ՝ «Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան մասնագիտության կրթական ծրագրերի վերջնարդյունքների մշակման գիտամանկավարժական մոտեցումները ՀՀ բուհերում» ենթագլուխը, որտեղ քննարկվում է շատ կարևոր հարց. մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերջնարդյունքների մշակման մոտեցումները, ներկայացված են նաև ՀՀ 10 բուհերում իրականացված հետազոտության արդյունքները, որոնք նպատակ ունեն պարզել, թե ՀՀ բուհերում կա՞ն մշակված ու հաստատված հայալեզու ուղեցույցներ, որոնցով առաջնորդվում են ՄԿԾ-ներ մշակելիս: Ստացված արդյունքները բավականին հետաքրքիր են, օրինակ՝ պարզվում է, որ 10 բուհերից միայն 2 բուհերում (ԵՊՀ, ՀՊՏՀ) է առկա ՄԿԾ-ների մշակման համար մեթոդական փաստաթուղթ, իսկ 10-ից 3 բուհերում չկա կրթական վերջնարդյունքների մշակման մեթոդական փաստաթուղթ (ՎՊՀ, ԳՊՀ, ՇՊՀ): Երրորդ՝ «Բարձրագույն կրթության ոլորտում շնորհիվ որակավորումները ՀՀ որակավորումներ ազգային շրջանակին համապատասխանեցնելու մեխանիզմները» ենթագլխում քննարկված են ՀՀ-ում ծրագրային հավատարմագրման իրականացման նպատակները, հանգամանորեն

ներկայացված է առաջարկվող փորձը, որի միջոցով կարելի է շնորհվող որակավորումները համապատասխանեցնել ՀՀ ՈԱՇ-ին:

Երրորդ գլուխը, կրում է «Որակավորումների ազգային շրջանակի գնահատումը ինքնահավաստման միջոցով» խորագիրը, բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնք իրար փոխլրացնում են և միասին ստեղծում են ընդհանուր պատկերացում ՈԱՇ-ի գնահատման մասին ինքնահավաստման միջոցով:

Առաջին՝ «Ինքնահավաստման նշանակությունը մասնագիտական կրթության որակի ապահովման ենթատեքստում» ենթագլխում քննարկվում է, թե ինչ է ինքնահավաստումը, նրա նշանակությունը և ինքնահավաստման համար 7 չափանիշները: Հետազոտության թեմայի բացահայտման համար շատ կարևոր է, որ հեղինակը ցույց է տվել որակավորումների ազգային շրջանակների և որակավորումների եվրոպական շրջանակի փոխհարաբերությունները:

Երկրորդ՝ «Ինքնահավաստման գործընթացի միջազգային փորձը» ենթագլխում, աղյուսակի միջոցով ներկայացվում է ինքնահավաստման և ՈԵՇ-ի հետ համապատասխանեցման համեմատությունը, վերլուծության են ենթարկվում Իռլանդիայի, Բելգիայի, Գերմանիայի որակավորումների ազգային շրջանակների ինքնահավաստման գործընթացները:

ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման մոդելը ներկայացված է երրորդ՝ «ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդելը» ենթագլխում: Առաջարկվող մոդելն, ըստ հեղինակի, կարող է նպաստել տվյալ գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ընթացակարգերի մշակմանն ու բարելավմանը: Ատենախոսությունն ավարտվում է եզրակացությամբ, որը բաղկացած է 6 կետերից, դրանք համապարփակ, բովանդակալից եզրահանգումներ են՝ արված թեմայի լուրջ ուսումնասիրությունների, վերլուծությունների արդյունքում: Ներկայացված եզրահանգումները համապատասխանում են հետազոտության խնդիրներին: Բավականին հարուստ է գրականության ցանկը, ներկայացված է շուրջ 76 ն՝ հայալեզու, և՛ անգլերեն գրականություն, էլեկտրոնային աղբյուրներ, բազմաթիվ կանոնակարգեր և ընթացակարգեր:



Հավելվածում հեղինակի կողմից ներկայացված ատենախոսությունում կիրառված եզրույթների հայերեն համարժեքներն են, որոնք անշուշտ լրացնում են աշխատանքի բովանդակությունը:

Աշխատանքում ներկայացված է 14 աղյուսակ և 6 գծապատկեր, ինչն ավելի տեսանելի է դարձնում ստացված արդյունքները:

Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական գիտական հետազոտության առաջադրվող պահանջներին, հետազոտությունն ունի գիտական նշանակություն մանկավարժության բնագավառում, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում: Աշխատանքն արժեքավոր է և օգտակար ՀՀ բուհերի բարեփոխման գործընթացում: Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է սեղմագրում և հրատարակված հոդվածներում:

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ նշենք մի քանի նկատառումներ.

1. Գիտական նորույթի մեջ /4/նշված է, որ մշակվել են այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան համապատասխանեցնել բարձրագույն կրթության ոլորտում շնորհված որակավորումները ՀՀ որակավորումների ազգային շրջանակին: Կարծում ենք՝ դրա վերաբերյալ կարելի էր ներկայացնել խնդիր:
2. Մշակված ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդելը ներկայացված է հիմնականում տեսական ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա: Կարելի էր այն մշակել սոցիոլոգիական հարցումների արդյունքում, ֆոկուս խմբի կամ փորձարարական աշխատանքի միջոցով և այլն:
3. ՄԿԾ-երի ուսումնասիրությունները և վերլուծությունները կարելի էր ներկայացնել որևէ բուհի մի կոնկրետ կրթական ծրագրի օրինակի հիման վրա:
4. Հեղինակը ներկայացրել է որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման գործընթացի իրականացման ընթացքում հանդիպող խոչընդոտների վերացման հնարավոր մոտեցումները, մինչդեռ կարելի էր

առավել հստակեցում մտցնել, գուցե ներկայացնել նաև օրենսդրական կարգավորման տեսանկյունից:

5. Հետազոտական աշխատանքը գերծ չէ տեխնիկական վրիպումներից. օրինակ՝ հղումներում նշված չեն էջեր և այլն:

Վերոհիշյալ նկատառումները չեն ստվերում ատենախոսության գիտատեսական և գործնական նշանակությունը:

Անի Գագիկի Մազմանյանի «Ռրակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում» խորագրով գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին:

Ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ռ. ՄԱՐԴՈՅԱՆ

ՊՐՈՖԵՍՈՐ Գ. ՊԵՏՐՈՅԱՆ, ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

ՇՊՀ-Ի ԳԻՏԱԿԱՆԱԿԱՆ

Կ. ՊԵՏՐՈՅԱՆ



16.06.2021թ.